ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայ ժողովրդի երկարամյա ազգային-ազատագրական պայքարը պսակվեց հաջողությամբ 1918 թ. մայիսի 28-ին ծնվեց Հայաստանի Հանրապետությունը, որին վիճակված էր դժնդակ պայմաններում գոյատևել 2,5 տարի։ Ցավոք, այն կործանվեց Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի համատեղ շանքերով, որը խաթարեց մեր բնականոն զարգացումը։ Այդպիսի զարգացմանը վերադառնալու տեսակետից հրատապ և կենսական նշանակություն ունի հայոց ազգային պետության փորձը։

Հրապարակվող փաստաթղթերը հայտնաբերվել են Հայաստանի պատմության պետական կենտրոնական արխիվում։ Վավերագրերը ներկայացնում են Հայաստանի Հանրապետության կյանքի տարբեր կողմերը և դասակարգված են ժամանակագրական կարգով։

Ռ. Ա. ՆԱՀԱՏԱԿՅԱՆ

Հայոց ազգային խորհրդի ճայտարարագիրը՝ Հայաստանի Հանրապետության առաջին կառավարության կազմի մասին

24 մայիսի, 1918 թ.
Երևան

Հայոց ազգային խորհուրդը հայտնում է, որ կազմված է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ հետևյալ կազմով

Նախարար նախագահ՝ Հովհաննես Քաջազնունի
Նախարար արտաքին գործերի՝ Ալեքսանդր Խատիսյան
Նախարար ներքին գործերի՝ Արամ Մանուկյան
Նախարար զինվորական՝ գեներալ Հովհաննես Հախվերդյան
Նախարար ֆինանսների՝ Խաչատուր Կարճիկյան
Նախարար արդարադատության՝ բաց։

Ալեքսանդր Խատիսյանի բացակայությանը արտաքին գործերի նախարարի պաշտոնը վարելու է նախարար նախագահը։

Արդարադատության նախարարությունը ժամանակավորապես կառավարելու է Խաչատուր Կարճիկյանը։

Հայոց ազգային խորհուրդ

Հայաստանի Հանրապետության պատմության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊՊԿԱ), ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 2։ Տպագիր, հայերեն, թուրքերեն, ռուսերեն։

Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական միսիայի գրությունը արտաքին գործերի մինիստրին՝ մաքսանենգության մեծ տարածում գտնելու մասին

№ 950

29 սեպտեմբերի, 1918 թ.
Թիֆլիս

Խնդրում եմ ներքին գործերի պ[արոն] մինիստրի ուշադրությունը հրավիրեք այն հանգամանքի վրա, որ ապրանքների մաքսանենգ արտահանությունը Հայաստանից չափազանց շատացել է վերջերս։ Ապրանքներ արտահանում են թե սովորական տրակտով և թե զարտուղի լեռնային ճանապարհ-

ներով, Մաքսանենգները հատկապես մանուֆակտուրայի արտահանության համար օգտվում են կրկնահարկ արկղներով, անկողինների մեջ են կապում և այլն։ Մաքսանենգությունը մանավանդ Այրումի և Սանահնի ճանապարհներով այնպիսի չափեր է ընդունել, որ նույնիսկ այդ վայրերի վրաց կոմիսարները ծաղրի առարկա են դարձնում մեր երկրի կարգերը։

Այս խնդրի վրա մասնավոր նամակով հրավիրել եմ և պ[արոն] Դրոյի ուշադրությունը, որովհետև մաքսանենգների գլխավոր ճանապարհը Դիլիջանի վրայով է։

Խորին հարգանքով՝ Ա. Ջամալյան

ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 200, ց. 1, գ. 106, թ. 35։ Բնագիր, ձեռագիր։

№ 3

Մինիստրների խորհրդի որոշումը՝ Շուշիի Մարիամյան օրիորդաց դպրոցի համար նյութական միջոցներ հատկացնելու մասին

22 մայիսի, 1919 թ.
Երևան

«Շուշվա Մարիամյան օրիորդաց դպրոցի ուսուցիչ-ուսուցչուհիներին 1919 թ. հունվարի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը ռոճիկներ տալու համար հատկացնել քառասուն հազար հինգ հարյուր ռուբլի (40500), հանձնարարելով ֆինանսների մինիստրության՝ բանալ համապատասխան վարկ հանրային կրթության մինիստրության»։

Սույն օրենքը հաստատված է Մինիստրների խորհրդի 1919 թվի մայիսի 22-ի նիստում ըստ Հայաստանի խորհրդի 1919 թվի ապրիլի 27-ին ընդունած օրենքի։

Մինիստրների խորհրդի գործերի կառավարիչ՝ Գ. Խատիսյան

ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 199, ց. 1, գ. 57, թ. 47։ Բնագիր, ձեռագիր։

№ 4

Հանրային կրթության և արվեստի մինիստրության օրինագիծը՝ Դվինի շրջանը հնագիտական շրջան հայտարարելու մասին

13 հունիսի, 1919 թ.
Երևան

«Հայաստանի հին մայրաքաղաք Դվինի շրջանը հայտարարել հնագիտական շրջան և հանձնարարել հանրային կրթության և արվեստի մինիստրությանը՝ կազմել մի հանձնախումբ և նրա միջոցով անմիջապես ճշտել հնագիտական շրջանի սահմանները և ապա ըստ այնմ միջոցներ ձեռք առնել պահպանության համար։ Այս նպատակի համար վարկ բանալ հանրային կրթության և արվեստի մինիստրի անունով 7740 ռ[ուբլի]՝ համաձայն ներկայացրած նախահաշվի»։

Ի տ[եղի] հանրային կրթության և արվեստի մինիստր՝ Ն. Հովհաննիսյան

ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 199, ց. 1, գ. 57, թ. 73։ Բնագիր, մեքենագիր։

№ 5

Պարսից շահի հեռագիրը Հայաստանի Հանրապետության վարչապետ Ալ. Խատիսյանին՝ հայ–պարսկական բարիդրացիական հարաբերությունների մասին

18 հունիսի, 1919 թ.
Թեհրան

Պարսից բարձր կառավարությունը միշտ ցանկացող է եղել և է հայերի բարեբախտության և երջանկության և անընդհատ իր հողի մեջ նրանց հանգստության և անդորրության համար մասնավոր ճիգ ու ջանքեր է անում և հույս ունի, որ խաղաղարար կոնֆերանսից պաշտոնական բնույթ ձեռք բերելուց հետո այդ կառավարության գործիչներն, ինչպես որ հեռագրել են, լավ հարաբերության մեջ կլինեն իրենց հարևան պարսից կառավարության հետ և հետզհետե այդ լավ հարաբերությունների և սերտ բարեկամությունների կապերը երկու կողմից կաշխատեն ամրապնդել։ Պարսից կառավարությունն յուր կողմից ամենաբարձր աջակցությունը և կարեկցությունը ինչպես որ առաջուց էլ ունեցել է հայերի նկատմամբ չի խնայելու, ուր էլ որ հարկ լինի այդ մասին կատարյալ հավաստիություն է տալիս։

ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 200, ց. 1, գ. 13, թ. 13։ Բնագիր, ձեռագիր։

№ 6

Բանասեր և մանկավարժ Սենեքերիմ Տեր–Հակոբյանի խնդրագիրը հանրային կրթության և արվեստի մինիստրին՝ բանահյուսական հետազոտությունների համար իրեն վճարելու մասին

30 հուլիսի, 1919 թ.
Երևան

Տեր նախարար

Երբեմն տաճկական տիրապետության ներքև գտնվող հայկական գավառների բնիկների ջնջումի և տեղահանության պատճառով ոչնչացվեց նաև նույն շրջանների հայ ժողովրդի թե՛ նյութական և թե մտավոր մշակույթի արդյունքների մեծագույն մասը։ Այդ կորուստը մասամբ դարմանելու համար վերջին երեք տարիներում փորձեր եղան փախստականների մեջ պահպանվող այդ արդյունքների գեթ մնացորդները փրկելու։

Գրամատուցս, որպես մինը այդ նպատակի համար աշխատողներից և գիտակ ցարդ կատարվածներին, գալիս է Ձեր ուշադրությանը ներկայացնելու, որ այդ ուղղությամբ կատարելի աշխատանքների մեջ հերթական է հայ ժողովրդական բանահյուսության վիպական ղրույցները գրի առնելը շարունակելու կարիքը, որովհետև պատմողներից շատերը հետզհետե չքանում են, և քանի դեռ մեր գրականության այս փարևոր մասը լրացնելու համար Հայաստանի մոտակա գավառներում գտնվում են Աղձնյաց, Տուրուբերանի և Մոկաց աշխարհներից պատմող փախստականներ, կարելի է հնարավոր կացուցանել այդպիսիների մոտավոր ներկայությունից օգտվելը։ Սույն նպատակի համար հաջողագույն բանահավաքների բացակայության դեպքում կխնդրեի դյուրությունն ընձեռել գրամատուցիս առաջիկա ամիս և կեսի ընթացքում հիշածս նյութերը հավաքելու համար։ Առ այս ամենաանհրաժեշտ ծախսերն են՝ 1250 ռ[ուբլի] պատմողների վարձատրության համար, 2000 ճանապարհածախսից և ուղեկցի, 750 ռ[ուբլի] լուսանկարչական և այլ պիտույքների համար, ընդամենը չորս հազար։ Հավաքված նյութերը զեկուցման հետ միասին կներկայացվեն նախարարությանդ։

Սենեքերիմ Տեր–Հակոբյան

ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 207, ց. 1, գ. 122, թ. 38։ Բնագիր, ձեռագիր։

№ 7

Հայաստանի Հանրապետության հանրային կրթության և արվեստի մինիստր Ն. Ադբալյանի գրությունը արտաքին գործերի մինիստրին՝ վերջինիս ենթակա հիմնարկներում արխիվների պահպանության համար միջոցներ ձեռնարկելու մասին

№ 1874

9 օգոստոսի, 1919 թ.
Երևան

Մինիստրությանս հասած ամենաստույգ տեղեկություններից համաձայն Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում և այլ տեղեր զանազան մարդկանց ձեռքով զանազան արխիվներ են վաճառվում խանութպաններին իբրև անպետք թուղթ և այդպիսով կորստյան մատնվում խիստ արժեքավոր փաստաթղթեր ու վավերագրեր։

Հայտնելով այս մասին, խնդրում եմ Ձեզ, պ[ատոն] մինիստր, բարեհաճել կարգադրել Ձեզ ենթակա հիմնարկություններին միջոցներ ձեռք առնելու արխիվների պահպանության համար։

Հանրային կրթության և արվեստի մինիստր՝ Ն. Ադբալյան

ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 200, ց. 1, գ. 152, թ. 55։ Բնագիր, մեքենագիր։

№ 8

Հանրային կրթության և արվեստի մինիստր Ն. Ադբալյանի կազմած տեղեկագիրը՝ ուղղված արտաքին գործերի մինիստրությանը՝ Հայաստանի Հանրապետության 1918—1919 թթ. տարրական դպրոցների մասին

18 օգոստոսի 1919 թ.
Երևան

Ամբողջ Հայաստանի տերիտորիան բաժանված է եղել երկու տեսչությունների։ Առաջին տեսչությունը իր մեջ ընդգրկել է Երևանի, Ալեքսանդրապոլի և Ղարաքիլիսայի շրջանները, երկրորդ տեսչությունը՝ Նոր Բայազետի, Իջևանի և Դարալագյազի շրջանները։

Առաջին տեսչության մեջ բաց է եղել 29 պետական դպրոց, ուր պաշտոնավարել են 56 ուսուցիչ, Բ տեսչության մեջ եղել է 49 դպրոց՝ 97 ուսուցչով։

Ամբողջ Հայաստանում եղել է 48 ծխական դպրոց՝ 107 ուսուցչով։

Երևան քաղաքում եղել է քաղաքային ինքնավարության հսկողության տակ 4 դպրոց 23 ուսուցչով, Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարությունը ունեցել է 3 դպրոց՝ 20 ուսուցչով։

Ամբողջ Հայաստանում գոյություն են ունեցել 133 տարրական դպրոցներ՝ 303 ուսուցչով։ Այն նույն տերիտորիայի վրա երկու-երեք տարի առաջ եղել են նույն տիպի մոտ 600 դպրոցներ։

Դպրոցների մեծ մասում ուսումը սկսվել է դեկտեմբերին, տարվա ընթացքում, հիվանդությունների պատճառով, եղել են պարապմունքների ընդհատումներ, նույնիսկ ամիսներով։

Այժմ ենթադրվում է ունենալ մոտ 500 տարրական դպրոց՝ հայերի, ռուսների, հույների և թուրքերի համար. այդ դպրոցներում պաշտոնավարելու են մոտ հազար ուսուցիչ, ամբողջ ծախքը ենթադրվում է 26 միլիոն ռուբլի։

Հանրային կրթության և արվեստի մինիստր՝ Ն. Ադբալյան

ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 200, ց. 1, գ. 152, թ. 114։ Բնագիր, մեքենագիր։

№ 9

Հանրային կրթության և արվեստի մինիստրության օրինագիծը՝ Երևանում և Ալեքսանդրապոլում հայոց լեզվի դասընթացներ հիմնելու մասին

14 հոկտեմբերի, 1919 թ.
Երևան

Հանրային կրթության և արվեստի մինիստրությանը՝ 12600 ռ[ուբլի] վարկ բանալ Երևանում և Ալեքսանդրապոլում Հայաստանի պաշտոնեության համար հայոց լեզվի դասընթացներ հիմնելու նպատակով։

Հանրային կրթության և արվեստի մինիստր՝ Ն. Ալբալյան

ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 199, ց. 1, գ. 98, թ. 58։ Բնագիր, մեքենագիր։

№ 10

Հայաստանի Հանրապետության խնամատարության և աշխատանքի նախարարության գրությունը նախարարների խորհրդին՝ Շարուրի և Նախիջևանի շրջանների հայերի ծանր վիճակի և նրանց օգնություն ցույց տալու մասին

№ 9482

15 նոյեմբերի, 1919 թ.
Երևան

Վերջին շաբաթվա ընթացքում մինիստրությանս ստացած տեղեկություններից երևում է, որ Շարուրի և Նախիջևանի շրջանների հայ ազգաբնակությունը գտնվում է ծայր աստիճան ողբալի դրության մեջ։

Տեղական թուրք իշխանությունն ամեն կերպ արգելում է նրանց հաց և այլ մթերքներ բաժանելը, ուստի և սովամահության դեպքերը գնալով շատանում են։ Ամերիկյան ներկայացուցիչները անզոր են նրանց օգնության հասնել։

Հայտնելով Ձեզ այս մասին, խնդրում եմ կարգադրել՝ 1) որ արտաքին գործոց մինիստրը բանակցություններ վարե թուրքական ազգային խորհրդի և Ադրբեջանի ներկայացուցչի հետ՝ հայ ազգաբնակության Շարուրից և Նախիջևանից դուրս բերելու համար և 2) հանձնարարել խնամատարության և աշխատանքի մինիստրությանը՝ դրամ հատկացնել, ամերիկացիների միջոցով այդ ազգաբնակության կարիքների և տեղափոխության համար։

Խնամատարության և աշխատանքի մինիստր՝ Ա. Բաբալյան

ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 200, ց. 1, գ. 53, թ. 223։ Բնագիր, ձեռագիր։

№ 11

Հայաստանի Հանրապետության խորհրդարանի օրինագիծը՝ Հայաստանի սահմաններից դուրս գտնվող հայկական դպրոցներին նյութական օգնություն ցույց տալու մասին

20 դեկտեմբերի, 1919 թ.
Երևան

Հանրային կրթության և արվեստի մինիստրությանը տրամադրել 1.500.000 ռ[ուբլի] վարկ բանալ Հայաստանի սահմաններից դուրս գտնված հայ կրթական հաստատություններին նպաստելու նպատակով։

Մինիստր՝ նախագահ՝ Ա. Խատիսյան
Հանրային կրթության և արվեստի մինիստր՝ Ն. Ադբալյան
Ֆինանսների մինիստր՝ Ն. Առարատյան

ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 199, ց. 1, գ. 98, թ. 101։ Բնագիր, մեքենագիր։

№ 12

Խորհրդարանի օրենքը՝ պետական լեզվի մասին

26 դեկտեմբերի, 1919 թ.
Երևան

1. Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է և պարտադիր՝ զորքի ու բոլոր պետական և հասարակական հաստատությունների մեջ։ Այլ լեզուների գործածությունը պետական ու հասարակական հիմնարկությունների մեջ սահմանվում է հատուկ օրենքով։

2. Պետական և հասարակական հաստատությունները պարտավոր են վեց ամսվա ընթացքում հայերենը դարձնել պետական գործավարության պաշտոնական լեզու։

Փոխնախագահ պառլամենտի՝ Լևոն Շանթ
Ի տ[եղի] ավագ քարտուղարի՝ Ա. Սաֆրաստյան

ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 207, ց. 1, գ. 392, թ. 46։ Պատճեն, մեքենագիր։

№ 13

Հանրային կրթության և արվեստի մինիստրի գրությունը մինիստրների խորհրդին՝ Հայկական հուշարձանների պահպանության գործում մինիստրության ներկայացուցչի մասնակցության հարցի մասին

№ 5020

31 դեկտեմբերի, 1919 թ.
Երևան

Ըստ նախարարական խորհրդի դեկտեմբերի 19-ի որոշման՝ գաղթականության կողմից դատարկ դյուղերը բնակեցնելու գործին վերաբերյալ խնդիրները ենթակա են խնամատարության և ներքին գործոց մինիստրների հոգածության։

Ի նկատի ունենալով, որ պատմական Հայաստանի հողի վրա մահմեդական տարրերը տեղավորված էին առավելապես այնպիսի վայրերում, որոնք կամ պատմական մեծ նշանակություն ունեին, կամ թե մինչև այժմ դեռ պահած են իրենց վրա հին հուշարձաններ, շատ նպատակահարմար է այժմևեթ, երբ այդպիսի տեղերից շատերն արդեն դատարկ են բնակչությունից, կարգադրվեր, որ նման տեղերն այսուհետև կամ իբր հնագիտական վայր բոլորովին ազատ մնային բնակչությունից, կամ թե օտար տարրերը փոխարինեին հայերով։

Այդ պատճառով խնդրում եմ նման խնդիրների լուծման մեջ թույլ տալ մասնակցել հանրային կրթության և արվեստի մինիստրության ներկայացուցչին՝ խորհրդակցական ձայնով։

Հանրային կրթության և արվեստի մինիստր՝ Ն. Աղբալյան

ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 199, ց. 1, գ. 98, թ. 111։ Բնագիր, մեքենագիր։

№ 14

Հաղորդակցության մինիստրության ծանուցումը հանրային կրթության և արվեստի մինիստրին՝ գրագրությունը հայերեն լեզվով վարելու մասին

№ 1107

11 ապրիլի, 1920 թ.
Երևան

Այսու հաղորդում եմ Ձեզ ի գիտություն, որ սույն թվի մայիսի 1-ից

բոլոր ներքին հեռագրերը, բացի զինվորական բնույթ կրող հեռագրերից, կընդունվեն բացառապես հայերեն լեզվով։

Նախարար՝ Ա. Ջամալյան

ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 207, ց. 1, գ. 391, թ. 13։ Բնագիր, ձեռագիր։

№ 15

Հաղորդակցության մինիստրության ծանուցումը հանրային կրթության և արվեստի մինիստրության դիվանի տեսչին՝ դրագրությունը հայերեն լեզվով վարելու մասին

№ 1836

17 մայիսի, 1920 թ.
Երևան

Համաձայն հաղորդ[ակցության] նախարարի կարգադրության, պատիվ ունիմ հաղորդելու Ձեզ, որ սույն թվի հունիսի 1-ից սկսած մինիստրությանս ուղղված բոլոր դրագրությունները պետք է լինին միմիայն հայերեն լեզվով գրված. ռուսերեն գրությունները ուշադրության չեն առնվի։

Դիվանի տեսուչ՝ Ջալալյան

ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 207, ց. 1, գ. 391, թ. 17, Բնագիր, ձեռագիր։

№ 16

Հանրային կրթության և արվեստի մինիստրության շրջաբերականը՝ ուղղված Ալեքսանդրապոլի առևտրական միջնակարգ դպրոցի վերատեսչին՝ նախարար բառի գործածության մասին

№ 3316

9 օգոստոսի, 1920 թ.
Երևան

Նախարարների խորհրդի որոշման համաձայն առաջարկում եմ այսուհետև մինիստր, մինիստրություն բառերի փոխարեն գործ ածել նախարար, նախարարություն։

Միջնակարգ դպրոցների բաժնի վարիչ*

ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 207, ց. 1, գ. 392, թ. 5։ Բնագիր, մեքենագիր։

№ 17

Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության տեղեկագիրը՝ ուղղված նախարարների խորհրդին՝ Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչների և ճյուպատոսների մասին

29 սեպտեմբերի, 1920 թ.
Երևան

* Ստորագրությունն անընթեռնելի է։

Վայր	Պաշտոն	Անուն, ազգանուն
Վրաստան		
1. Թիֆլիս	Դիվանագիտական ներկայացուցիչ	Բեկզադյան
2. Բաքուրիանի	Ընդհանուր հյուպատոս	Աթաբեկյան
3. Սուխում	Հյուպատոս	Սահակյան
4. Սոչի	Հյուպատոսի պաշտոնակատար	Ա. Բ. Հակոբյան
5. Փոթի	Գործակալ	Թյուրքյան
Ադրբեջան		
6. Բաքու	Դիվանագիտական ներկայացուցիչ	Մ. Հարությունյան
6ա Բաքու	Հյուպատոս	Ներսիսյան
Ռուսաստան		
7. Մոսկվա	Դիվանագիտական ներկայացուցիչ	Եղիազարյան
8. Ռոստով	Ընդհանուր հյուպատոս	Գ. Ջալխուշյան
9. Օդեսա	—»—	Ե. Մելիքյան
10. Նովոռոսիյսկ	Հյուպատոսի պաշտոնակատար	Կապիտան Տոնև
11. Սեբաստոպոլ	—»—	Սաղաթելյան
12. Կիև	—»—	Բժիշկ Մելիքյան
13. Խարկով	—»—	Բժիշկ Ցուղբաշյան
14. Վլադիկավկազ	Հյուպատոս	Սառիկյան
15. Կոստանդնուպոլիս	Ընդհանուր հյուպատոս	Բախշի Աթայան
16. Արմավիր	Հյուպատոսի պաշտոնակատար	Ներվիլյան, փոխարեն բժիշկ Տամաշյան
17. Սամսուն	Հյուպատոսի պաշտոնակատար	Արսեն Քալանթար
18. Նկատերինոդար	—»—	Սաղաթելյան, փոխարեն Բախշիսարայցև
Պարսկաստան		
18ա Թեհրան	Դիվանագիտական ներկայացուցիչ	Արղությյան
Տաճկաստան		
19. Կ. Պոլիս	—»—	Թահթաճյան
Հունաստան		
20. Աթենք	—»—	Տիգրան Ջայան
Ռումինիա		
21. Սամոշիվար (Արմենոպոլիս)	Հյուպատոսի պաշտոնակատար	Պապ Գուստավ
22. Բեռլին	Դիվանագիտական ներկայացուցիչ	Դոկտոր Գրինֆելդ
Ֆրանսիա		
23. Մարսել	Հյուպատոս	Տիգրան Միրզոյան
Անգլիա		
24. Լոնդոն	Դիվանագիտական ներկայացուցիչ	Հովհաննես Մասեհյան
Իտալիա		
25. Հռոմ	Դիվանագիտական ներկայացուցիչ	Միքայել Վարանդյան
26. Միլան	Հյուպատոսի պաշտոնակատար	Դիլսիզյան
Շվեյցարիա		
27. Ժնև	Հյուպատոսի պաշտոնակատար	Ներուզ

1	2	3
Եգիպտոս		
28. Կահիրե	Դիվանագիտական ներկայացուցիչ	Խոսրով Զոհրապ
Աբիսինիա		
29. Ադիս-Աբեբա	Դիվանագիտական ներկայացուցիչ	Մարտիկ Գեորգով
29ա Ադիս-Աբեբա	Հյուպատոս	Հայկ Պատապան
Ամերիկա		
30. Վաշինգտոն	Դիվանագիտական ներկայացուցիչ	Փաստրմաճյան
Ճապոնիա		
31. Տոկիո	—»—	Տիկին Արգար
Թինլանդիա		
32. Հելսինգֆորս	Ընդհանուր հյուպատոս	Միքայել Ասատուրյան

ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 199, ց. 1, գ. 198, թթ. 9—11։ Բնագիր, մեքենագիր։

№ 18

Հայաստանի Հանրապետության խորհրդարանի որոշումը՝ խորհրդարանի անդամ Սիմեոն Վրացյանին վարչապետ ընտրելու մասին

24 նոյեմբերի, 1920 թ.
Երևան

Պառլամենտը 1920 թ. նոյեմբերի 23-ի նիստում վարչապետ ընտրեց պատգամավոր Սիմեոն Վրացյանին և հանձնարարեց նրան կառավարություն կազմել։

Նախագահ պառլամենտի՝ Հով[հաննես] Քաջազնունի
Ավագ քարտուղար՝ Հ. Տեր-Հակոբյան

ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 198, ց. 1, գ. 75, թ. 3։ Բնագիր, մեքենագիր։

№ 19

Հայաստանի Հանրապետության կառավարության հռչակագիրը՝ առկա կացության և երկիրը պաշտպանելու մասին

24 նոյեմբերի, 1920 թ.
Երևան

Տարապայման դժվարին ժամանակներում է կյանքի կոչվում ներկա կառավարությունը։ Տաճիկ զինված ուժերը գրավել են մեր երկրի խոշոր մասը։ Ազգաբնակությունը գրավված վայրերից տեղահան է եղած և գաղթական վիճակի մեջ անխնա կոտորվում է ցրտից և սովից։ Պետության ներսը կյանքի բնականոն ընթացքը խանգարված է։ Վարչական մեքենան թուլացած է մեծապես, ֆինանսական և հաղորդակցության միջոցները քայքայված, արդարադատությունը անհնարին վիճակում, պարենի մուտքը գրեթե կանգ է առել, իսկ ներսի աղբյուրները ցամաքում են արագությամբ։ Կայուն չէ և ժողովրդի հոգեկան դրությունը, որ իրեն սպառնացող ահավոր վտանգի դիմաց անկարող եղավ բավարար կամք և վճռականություն ցույց տալ։ Եվ այսպես,

երկիրը ապրում է ներքին ծանր տագնապ, որ ավելի ևս սաստկանում է արտաքին դժվարությունների պատճառով։

Ինչի՞ պետք է ձգտի այսպիսի հանգամանքներում նոր կառավարությունը։

Վերջին տարիների ընթացքում անդրկովկասյան ժողովուրդներին հասած բոլոր աղետների և դժբախտությունների պատճառը աշխարհի հզորների վարած իմպերիալիստական քաղաքականությունն է, որի հետևանքով անվերջ և արյունահեղ կռիվների և ավերածությունների թատերաբեմ է դարձել նաև Հայաստանը։ Այդ քաղաքականությունը սպառել է Հայաստանի դեմոկրատիայի շինարարական եռանդը։ Այդպիսի քաղաքականության հետևանքներից մեկն է նաև վերջին պատերազմը իր բոլոր արհավիրքներով։ Ներկա կառավարության առաջին և գլխավոր նպատակն է լինելու հանել մեր երկիրը քաղաքական այս ջրապտույտից և ազատել նրան օտար ուժերի քայքայիչ ազդեցությունից։ Հայաստանի պետական կառուցվածքը խարսխելու և բարգավաճելու է, ելնելով ոչ թե օտարների սին և վտանգավոր ներշնչումներից, այլ Հայաստանի դեմոկրատիայի իրական կարողությունից և հարևան ժողովուրդների հետ խաղաղ համակեցություն ստեղծելու ցանկությունից։ Հայաստանի կառավարությունը, ամուր ոտ դնելով այս ուղու վրա, հույս ունի, որ վերջին օրերի մեր քաղաքական կյանքը վրդովող այս պատերազմը կվերջանա հաշտությամբ և մեր հարևան տաճիկ ժողովրդի արդարացի իրավունքների նույնքան արդարացի բաշխում։ Մեր գործունեության նշանաբան է լինելու անկեղծ հաշտությունն Տաճկաստանի հետ և համերաշխություն ու խաղաղ համակեցություն բոլոր հարևան ժողովուրդների հետ։

Այսուհանդերձ, մենք գիտակցում ենք, որ հասարակական ներկա կարգերում, տարաբախտաբար, իշխողը գեռ ոչ թե արդարությունն է, այլ ուժը։ Եվ պետական ամեն մի կազմավորում իր գոյությունը և արդար իրավունքներն ապահովելու համար ստիպված է ունենալ կազմակերպված և ամուր ռազմական ուժ։ Ուստի և կառավարության գլխավոր հոգսերից մեկը պետք է լինի երկրի ուժերի հավաքումը և ժողովրդական կուռ բանակի կազմակերպումը։ Այդ նպատակով մենք աշխատելու ենք առողջացնել զորքի շարքերը և ուժեղացնել պետական գիտակցությունն ու անձնազոհության զգացումը բանակի մեջ։ Նույն նպատակով մենք մտածում ենք ազատել բանակը անվարժ և հոգնած տարրերից, զորացրում կատարելով բարձր հասակի զինվորների, որով ավելի բնականոն ընթացքի մեջ կմտնի թիկունքի կյանքը և զարկ կտրվի տնտեսական զարգացմանը։

Դավանելով «ամբողջ իշխանությունը աշխատավոր ժողովրդին» սկզբունքը, ներքին կյանքում կառավարությունը ուժգնորեն պայքարելու է պետության հիմքերը փորող բոլոր ուժերի և երևույթների դեմ։ Նա պետք է աշխատի հաստատել երկրի ներսում ապրող բոլոր ցեղերի իրական հավասարություն։ Հայաստանը նրա սահմաններում ապրող բոլոր ժողովուրդների սեփականությունն է կազմում։ Կառավարությունը պիտի ձգտե առողջացնել վարչական և դատաստանական խանգարված մեքենան, բարեկարգել հաղորդակցության միջոցները, կռվել ֆինանսական սուր տագնապի դեմ, վրճատելով պետական ծախսերը և նպաստելով երկրի արտադրական ուժերի զարգացման, ուժեղացնել տեղական ինքնավարությունները և վերացնել ամեն տեսակի արտակարգ դրությունը և երկիրը կառավարելու արտակարգ ձևերը։ Օրենքի գիտակցությունը, որ այնպես թուլացել է մեզ մոտ, պետք է ուժեղացվի, և հանցավորները պետք է պատժվին անխնա։ Պատերազմի արհավիրքների առդյունք բազմահազար գաղթականության վիճակը թեթևացնելու և պարենավորման սուր ճգնաժամը մեղմացնելու խնդիրը կառավարության լուրջ հոգսերից մեկը պետք է լինի։

Այն ընկերային խնդիրների մասին մենք չենք խոսում այստեղ, որովհետև մեր նպատակն է ընդգծել մոմենտի հարցերը։ Ինչ ասել կուզի, որ առաջին իսկ հնարավոր դեպքում կառավարությունը կզբաղվի սոցիալական

լուրջ բարենորոգումներով, և այստեղ կարիք չկա բացատրելու բնույթը այդ բարենորոգումների, որովհետև նրանք բխելու են սոցիալիստներից կազմված կառավարության աշխարհայացքից։

Ապավինելով Հայաստանի աշխատավոր ժողովրդի ռեալ ուժերին և հենվելով պառլամենտի վստահության և աջակցության վրա, կառավարությունը կլարե իր բովանդակ ուժը, որպեսզի հեռու պահե երկիրը արտաքին փոթորիկներից և տա ժողովրդին խաղաղություն և անարգել զարգացման հնարավորություններ։ Մեր բուռն փափագն է դարձնել ազատ և անկախ Հայաստանը ապահով և բարգավաճ։

Ս. Վրացյան

ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 199, ց. 1, գ. 198, թ. 144։ Տպագիր օրինակ։